«ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ (ԴԵՂԵՐԻ) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԷՄ-ԳՀԱՊՁԲ-2020/5 /1

ք. Գյումրի «24» փետրվարի 2020 թ.

«Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Անդրիասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կենդանի լույս» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Արթուր Իվանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 789720 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այնությունները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու Էնրիկո Մատտեի անվ. պոլիկլինիկա» ՓԲԸ	«Կենդանի Լույս» ՍՊԸ
ՀՎՀՀ 05502201	ՀՎՀՀ 05534453
Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ	Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

2050122037121001
Հասցե ք.Գյումրի, Աթարբեկյան 139 տ
Հեռ. 031253101
Էլ. Փոստ artur.ivanyan.71@mail.ru
Տնօրեն Ա.Իվանյան

/ստորագրություն/

Ա.Տ

Անհրաժեշտության դեպքում կարող են հանդես գալ հավասարվել հանդես գալ օրենսդրությանը չհակասող որոշումներ:

Հավելված N 1
«24» փետրվարի 2020թ. կնքված
«ԷՄ- ԳՀԱՊՁԲ-2020/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

/Հ	CPV	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	Ենթակա քանակը	ժամկետը
4	15911100	Էթիլ սպիրտ 96%	Լիզին Հայաստան	Ֆլակոն 96% 250մլ չվնասված,չկոտրված ապակե կամ պլաստիկե 22հկ, ամբողջականությունը պահպանվա * /տես ծանոթագրությունը/	»լիտր	420	126000	300	Ք.Գյումրի, Շիրակացի 13	300	31.12.2020թ.
5	15911100	Էթիլ սպիրտ 70%	Լիզին Հայաստան	Ֆլակոն 70% 250մլ չվնասված,չկոտրված ապակե կամ պլաստիկե 22հկ, ամբողջականությունը պահպանվա * /տես ծանոթագրությունը/	լիտր	425	106250	250	Ք.Գյումրի, Շիրակացի 13	250	31.12.2020թ.
7	33631170	Տետրացիկլին	Արփիմեդ Հայաստան	10մգ/գ, 3գ ալյումինե պարկուճ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված,* /տես ծանոթագրությունը/;	հատ	740	8880	12	Ք.Գյումրի, Շիրակացի 13	12	31.12.2020թ.
8	33631282	Լինիմենտ վիշնեվսկի	. Բորիսով Բելառուսիա	1% քսուք ալյումինե պարկուճ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	390	11700	30	Ք.Գյումրի, Շիրակացի 13	30	31.12.2020թ.
12	33141142	Ներարկիչ ասեղով	Օրանժ Չինաստան	Ներարկիչ 3,0- եռակոմպոնենտ, ասեղ 23 G: * /տես ծանոթագրությունը/:	հատ	17	25500	1500	Ք.Գյումրի, Շիրակացի 13	1500	31.12.2020թ.
14	33141211	Է.Կ.Գ.-ժապավեն	ՖԴԲ Ռուսաստան	Հատ 63x30 * /տես ծանոթագրությունը/;	հատ	390	58500	150	Ք.Գյումրի, Շիրակացի 13	150	31.12.2020թ.
20	33141211	Սոնոգրաֆիայի տպիչ թուղթ	Տելե փափեր Մալազիա	Sony 897 (4-5/16in)՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	3900	46800	12	Ք.Գյումրի, Շիրակացի 13	12	31.12.2020թ.
22	33211160	Արյան անալիզի ազդանյութ/Կրեատինին /	Անալիզ մեդ Պրոմ ՍՊԸ Բելառուսիա	Կրեատինինի որոշման համար նախատեսված հավաքածու CREATININE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 200թեստ:Կրեատինինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը (օրինակ՝ կալիբրատոր, ստանդարտ կամ այլ անհրաժեշտ նյութեր): * /տես ծանոթագրությունը/	հատ	2600	10400	4	Ք.Գյումրի, Շիրակացի 13	4	31.12.2020թ.
29	33211240	Ռևմոֆակտոր-լեքս-RF	Անալիզ մեդ Պրոմ ՍՊԸ Բելառուսիա	Ռևմատոիդ ֆակտորի որոշման թեստ հավաքածու (RF): Մեթոդ ագլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: 100թեստ: Ռևմատոիդ ֆակտորի որոշման թեստ հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: * /տես ծանոթագրությունը/	հատ	4600	36800	8	Ք.Գյումրի, Շիրակացի 13	8	31.12.2020թ.
30	33211240	Արյան անալիզի ազդանյութ/Ց-Ռեակտին-պրոտեին-լեկս/	Անալիզ մեդ Պրոմ ՍՊԸ Բելառուսիա	C-ռեակտիվ սպիտակուցի որոշման համար նախատեսված հավաքածու CRP: Մեթոդ ագլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածուում թեստերի քանակը 100թեստ :C-ռեակտիվ սպիտակուցի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի	հատ	4800	38400	8	Ք.Գյումրի, Շիրակացի 13	8	31.12.2020թ.

				համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: * /տես ծանոթագրությունը/							
31	33211190	Ցոլիկոն անտի-Ա	Հեմատոլոգ ՍՊԸ Բելառուս	Ցոլիկլոն հակա - A: Մեթոդ՝ հեմագլյուտինացիա: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 100թեստ: * /տես ծանոթագրությունը/	հատ	1000	3000	3	Ք.Գյումրի, Շիրակացի 13	3	31.12.2020թ.
32	33211200	Ցոլիկոն անտի –Բ	Հեմատոլոգ ՍՊԸ Բելառուս	Ցոլիկլոն հակա - B: Մեթոդ՝ հեմագլյուտինացիա: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 100թեստ: * /տես ծանոթագրությունը/	հատ	1000	3000	3	Ք.Գյումրի, Շիրակացի 13	3	31.12.2020թ.
33	33211210	Ցոլիկոն անտի-Ց	Հեմատոլոգ ՍՊԸ Բելառուս	Ցոլիկլոն հակա - C: Մեթոդ՝ հեմագլյուտինացիա: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 100թեստ: * /տես ծանոթագրությունը/	հատ	1900	5700	3	Ք.Գյումրի, Շիրակացի 13	3	31.12.2020թ.
34	33211220	Ցոլիկոն անտի-Դ	Հեմատոլոգ ՍՊԸ Բելառուս	Ցոլիկլոն հակա - D: Մեթոդ՝ հեմագլյուտինացիա: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 100թեստ: * /տես ծանոթագրությունը/	հատ	1950	5850	3	Ք.Գյումրի, Շիրակացի 13	3	31.12.2020թ.
35	33691162	Գիմզա /Ռոմանովսկի/	Ռուսաստան	տուփ 1կգ չվնասված ամբողջականությունը պահպանված * /տես ծանոթագրությունը/;	հատ	8000	8000	1	Ք.Գյումրի, Շիրակացի 13	1	31.12.2020թ.
36	33211260	Արյան անալիզի ազդանյութ/Ա.Ս.Օ-լատեքս /	Անալիզ մեդ Պրոմ ՍՊԸ Բելառուսիա	ASO որոշման թեստ հավաքածու: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածուում թեստերի քանակը 100թեստ:ASO որոշման թեստ հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: * /տես ծանոթագրությունը/;	հատ	5100	40800	8	Ք.Գյումրի, Շիրակացի 13	8	31.12.2020թ.
37	33211300	Կալցիումի որոշման թեստ-հավաքածու (2x120մլ, +ստ) 240 թեստ	Անալիզ մեդ Պրոմ ՍՊԸ Բելառուսիա	Կալցիումի որոշման թեստ-հավաքածուCALCIUM Մեթոդ: կոլորիմետրիկ Ֆորմատ: 2x120մլ Ստուգվող նմուշ: արյան շիճուկ Ֆիրմայի նշանի առկայությունը Սերտիֆիկատ: ISO 13485 Պահպանման պայմանները 2-8C, For In Vitro Diagnostic only	հատ	6500	13000	2	Ք.Գյումրի, Շիրակացի 13	2	31.12.2020թ.
38	33621640	Հիդրոկորտիզոն (հիդրոկորտիզոնի ացետատ)	Արփիմեդ Հայաստան	քսուք 10մգ/գ, 10գ այլումինե պարկուճ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	300	6000	20	Ք.Գյումրի, Շիրակացի 13	20	31.12.2020թ.
40	33661154	Տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ)	Լիքվոր Հայաստան	լուծույթ (ակնակաթիլներ), 0.5%՝պլաստիկե սրվակ՝չվնասված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	2920	37960	13	Ք.Գյումրի, Շիրակացի 13	13	31.12.2020թ.
41	33671116	Քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ)	Արսանիտ Հայաստան	0.05%,10մլ շշիկ՝չկոտրվոդ,ն * /տես ծանոթագրությունը/;	հատ	440	6600	15	Ք.Գյումրի, Շիրակացի 13	15	31.12.2020թ.
42	33631282	Ստրեպտոցիտ	Էդա տեխ Հայաստան	5% այլումինե պարկուճ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	240	8640	36	Ք.Գյումրի, Շիրակացի 13	36	31.12.2020թ.
43	33631180	Արծաթի սուլֆադիազին	Արփիմեդ Հայաստան	1% այլումինե պարկուճ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	1450	26100	18	Ք.Գյումրի, Շիրակացի 13	18	31.12.2020թ.
44	33631281	Սինաֆլան	Բորիսով Բելառուսիա	1% քսուք այլումինե պարկուճ՝չվնասված, ամբողջականությունը պահպանված, * /տես ծանոթագրությունը/;	հատ	240	8640	36	Ք.Գյումրի, Շիրակացի 13	36	31.12.2020թ.

45	33611230	Ցինկի քսուք	Էդա տեխ Հայաստան	1% այումինե պարկուճ՝ չվնասված, անամբողջականությունը պահպանված, /տես նկարագրությունը/	հատ	250	9000	[illegible]	Ք.Գյումրի, Շիրակացի 13	[illegible]	31.12.2020թ.
57	[illegible]	[illegible]	Էդա տեխ Հայաստան	[illegible]	հատ	[illegible]	[illegible]	35	Ք.Գյումրի, Շիրակացի 13	[illegible]	31.12.2020թ.
61	38311100	Կշեռք	Հայաստան	Էլեկտրոնային կշեռք նախատեսված [illegible] քաշի որոշման համար	հատ	[illegible]	46800	6	Ք.Գյումրի, Շիրակացի 13	6	31.12.2020թ.
62	[illegible]	Նատրիումի [illegible]	Ֆարմատեք Հայաստան	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, կալցիումի քլորիդ Sodium chloride, potassium chloride, calcium [illegible] կալցիումներարկման [illegible] 0,49գր/մլ 250մլ	լիտր	260	2600	10	Ք.Գյումրի, Շիրակացի 13	[illegible]	31.12.2020թ.
							789720				

Ապրանքի [illegible] մատակարարումը [illegible] գնորդին հանձնելու պահին պետք է լինեն հետևյալը՝

ա. [illegible] ապրանքի [illegible] հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների:

ԳՆՈՐԴ

«Գյումրու Էնրիկո Մատտեի անվ. պոլիկլինիկա» ՓԲԸ

ՀՎՀՀ 05502201

Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

2050123001121001

Հասցե ք.Գյումրի, Շիրակացի 13

Հեռ. 031233178

Էլ. Փոստ enricomatte@mail.ru

Տնօրեն Ա.Անդրիասյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Կենդանի Լույս» ՍՊԸ

ՀՎՀՀ 05534453

Բանկ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ

2050122037121001

Հասցե ք.Գյումրի, Աթարբեկյան 139 տ

Հեռ. 031253101

Էլ. Փոստ artur.ivanyan.71@mail.ru

Տնօրեն Ա.Իվանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«24» փետրվարի 2020 թ. կնքված
«ԷՄ-ԳՀԱՊՁԲ-2020/5/1» *ծածկագրով պայմանագրի*

ԴԵՂՈՐԱՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]													
[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]													
[illegible]	[illegible]	[illegible]	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	15911100	Էթիլ սպիրտ 96%			12600	25200	37800	50400	63000	75600	88200	100800	113400	126000	126000
5	15911100	Էթիլ սպիրտ 70%			10625	21250	31875	42500	53125	63750	74375	85000	95625	106250	106250
7	33631170	Տետրացիկլին		1480	2220	2960	3700	4440	5180	5920	6660	7400	8140	8880	8880
8	33631282	Լինիմենտ վիշնեվսկի			1170	2340	3510	4680	5850	7020	8190	9360	10530	11700	11700
12	33141142	Ներարկիչ ³ë»Õáí		2550	5100	7650	10200	12750	15300	17850	20400	22950	25500		25500
14	33141211	Է.Կ.Գ.-ժապավեն			5850	11700	17550	23400	29250	35100	40950	46800	52650	58500	58500
20	33141211	Սոնոգրաֆիայի տպիչ թուղթ		3900	7800	11700	15600	19500	23400	27300	31200	35100	39000	46800	46800
22	33211160	Արյան անալիզի ազդանյութ/Կրեատինին /		2600			5200			7800				10400	10400
29	33211240	Ռևմոֆակտոր-լեքս-RF		4600		9200		13800	18400	23000	27600	32200	36800		36800
30	33211240	Արյան անալիզի ազդանյութ/Ց-Ռեակտին-պրոտեին-լեկս/		4800		9600		14400	19200	24000	28800	33600	38400		38400
31	33211190	Ցոլիկոն անտի-Ա		1000					2000					3000	3000
32	33211200	Ցոլիկոն անտի –Բ			1000			2000					3000		3000
33	33211210	Ցոլիկոն անտի-օ		1900					3800					5700	5700

34	33211220	Ցոլիկոն անտի-,		1950						3900				5850	5850
35	33691162	Գիմզա /Ռոմանովսկի/		8000											8000
36	33211260	Արյան անալիզի ազդանյութ/Ա.Ս.Օ-լատեքս /		5100		10200		15300		20400	25500	30600	35700	40800	40800
37	33211300	[illegible]		6500					13000						13000
38	[illegible]	[illegible]			[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	5400	6000	6000
39	[illegible]	Տետրակլին (լուծույթ՝ 1 մլ-ում 100 հազար միավոր)		[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]	32130	37060	37060
41	33671116	[illegible] (ասպիրինանալգին հիդրոքլորիդ)		[illegible]	1320	[illegible]	2640	[illegible]	3960	[illegible]	3960	[illegible]	4840	6600	6600
42	33631282	Ստրեպտոցիտ		720	1200	1920	2400	3120	3600	4080	4800	5280	6000	8640	8640
43	33631180	Արծաթի սուլֆադիազին		2900	5800	8700	11600	14500	17400	20300	23200	26100			26100
44	33631281	Սինաֆլան		720	1200	1920	2400	3120	3600	4080	4800	5280	6000	8640	8640
45	33611230	Ցինկի քսուք		750	1500	2250	3000	3750	4500	5250	6000	6750	7500	9000	9000
47	33651148	Կլոտրիմազոլ		780	1560	2340	3120	3900	4680	5460	6240	7020	7800	9360	9360
49	33661117	իզովալերիանաթթվի մենթիլ էսթեր			220	440	660	880	1100	1320	1540	1760	1980	2200	2200
51	38431720	Կապույտ ծայրադիր			500	1000	1500	2000	2500	3000	3500	4000	4500	5000	5000
52	38521400	Ավտոմատ դոզիմետր		30000											30000
53	38521400	Ավտոմատ դոզիմետր		30000											30000
57	33651135	Քլորամֆենիկոլ		1020	2040	3060	4080	5100	6120	7140	8160	9180	10200	12240	12240
61	38311100	Կշեռք				7800	15600	23400	31200	39000	46800				46800
62	24311360	Նատրիումի քլորիդ			260	520	780	1040	1300	1560	1820	2080	2340	2600	2600

Գնորդ

Գյումու «Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ
Բ.Գյումրի, Շիրակացի 13
ՀՎՀՀ 05502201
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 205002300112-1001
Էլ.փոստ՝ enricomatte@mail.ru
Տնօրեն Ա.Անդրիասյան

ՄԱՏԱԿԱՐԱՐ

«Կենդանի լույս» ՍՊԸ
Բ.Գյումրի, Աթարբեկյան 139 տ
ՀՎՀՀ 05534453
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050122037121000,00
Էլ.փոստ՝artur.ivanyan.71@mail.ru
Տնօրեն՝ Ա.Իվանյան